

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԵՆ ԼԱՂԵՆԻ ՄԱՅԿԱՆԻՑ ԴԵՏՈ

Մոհամադ Ռեզա Ջեյնալի
ասպիրանտ

Շատ կարճ սահմանեցուցիչ լուր էր: Բեն Լադենը սպանված է: Այն օրը, երբ ԱՄՆ նախագահ Օբաման հայտարարեց այս մասին (Պակիստանի տեղական ժամանակով 2011 թվականի մայիսի 2) գուցե հետագայում համարվեր համաշխարհային պատմության կարևորագույն օրերից մեկը, և դրա պատճառները լիովին բացահայտ էին: Վերջին երկու տասնամյակներում Բեն Լադենը դարձել էր մարդկության պատմության մշտական մղձավանջներից մեկը: Վերջին երկու տասնամյակների ժամանակակից ահաբեկչության ամենաակնհայտ խորհրդանիշն ու հակաահաբեկչական պայքարի տարբեր դրսևորումների հիմնական թիրախը, որն իր անվամբ, գործողությունների և զաղափարների քննարկմամբ էր ողողել ամբողջ աշխարհի լրատվամիջոցները: Աշխարհի ցանկացած կետում որևէ ահաբեկչական գործողության իրականացման դեպքում ոստիկանությունն ու անվտանգության մարմինները որպես առաջնային ռեակցիա աշխատում էին բացահայտել և վերլուծել դրա կապը Բեն Լադենի և «Ալլաեդե» խմբավորման հետ: Կարծես բոլորը հավատացած էին, որ ոչ մի լուրջ ահաբեկչական գործողություն չի կարող կատարվել առանց Բեն Լադենի և «Ալլաեդե» խմբավորման հետ կապ ունենալու: Իհարկե, լինում էին դեպքեր, երբ բացահայտվում էին լուրջ և համոզիչ ապացույցներ և փաստարկներ, որոնք ապացուցում էին, որ այն Բեն Լադենի և «Ալլաեդե» խմբավորման հետ որևէ կապ չի ունեցել:

Իհարկե, ԱՄՆ ղեկավարության հայտարարության համաձայն, Բեն Լադենի դին նետվեց հեռավոր օվկիանոսի անհայտ խորքերը (Լուի, Գլեն, 2011, «Ինչու Բեն Լադենի դին այդքան շտապ նետվեց ջրի մեջ», <http://newsfeed.com>): Սակայն, վստահաբար, այդ գործողությունը չի կարող նպաստել, որպեսզի ի սպառ վերանան պատմության ամենամեծ ահաբեկիչ և աշխարհի ամենազաղտնի ահաբեկչական խմբավորման ղեկավար և առաջնորդ Բեն Լադենի զաղափարները և նրա մարմնի հետ մեկտեղ փոխեն օվկիանոսի խորքերում: Նրա ղեկավարած կազմակերպությունը, նրա սպանության սահմանեցուցիչ

և անսպասելի լուրը ստանալով որոշ ժամանակ փոքր ինչ անկում ապրեց և ինչ որ չափով նահանջեց, սակայն, անկասկած, ահաբեկչությունն ու այն ահն ու սարսափը, որ Բեն Լադենն ու նրա կազմակերպությունը տարածել էին ողջ աշխարհում այդքան հեշտ և արագ չի վերանա (Չամբրի, Միխայիլ, 2011, «Բեն Լադենի մահը չի նշանավորում ահաբեկչության ավարտը», [www. Dialog.com](http://www.Dialog.com)):

Այս հոդվածի քննարկման հիմնական առարկան Բեն Լադենի և «Ալլաեդե» խմբավորման ահաբեկչական գործողությունների բացասական ազդեցության կայունության պատճառների քննարկումն է՝ անգամ նրա մահվանից հետո: Այս պատճառների ճշգրիտ ընկալման համար անհրաժեշտ է ուսումնասիրել «Ալլաեդե»-ի և նրա ենթակայության տակ գործող խմբավորումների ահաբեկչության ձևավորման հիմնական դրդապատճառներն ու հիմքերը:

Ահաբեկչությունն ուսումնասիրող մասնագետները ներկայացնում են այդ երևույթի և դրա տարածման մի շարք քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային և հասարակական պատճառներ և արմատներ (Լիա, Բրայներ, «Չամաշխարհայնացումն ու ահաբեկչության ապագան», 2005թ, «Ռուբլեջ» հրատ., էջ 15-16), որոնցից ամենակարևորներն ու ազդեցիկները հետևյալն են.

1. Հասարակական անարդարությունն ու խտրականությունը, հանրային հնարավորությունների և միջոցների անհավասար բաշխումը, ինչպիսին է իռլանդական ահաբեկչությունը, որն իրականացվում է արտաքուստ անկախության և Անգլիայի տիրապետությունից դուրս գալու միտումներով, սակայն, դրա արմատները բխում են հասարակական խտրականությունից և անհավասարությունից, Իռլանդիայի կաթոլիկների և Անգլիայից կախման մեջ գտնվող բողոքականների միջև հանրային հնարավորությունների և առավելությունների անհավասար բաշխումից¹:

2. Ժողովրդավարության և մարդու, հասարակական և քաղաքական ազատությունների և մարդու իրավունքների հանդեպ հարգանքի բացակայություն, ինչպիսին է Իրանում «Մոջահեդինե խալլ» կամ «Զե-

¹ Իռլանդական ահաբեկչություն, որն իրականացվում է դեռևս 1831 թվականից և պայմանավորված է իռլանդացի կաթոլիկների և Անգլիայից կախված բողոքականների միջև տարածայնություններով և Անգլիայի տիրապետությունից ազատվելու և Իռլանդիայի անկախության հաստատման ձգտումներով:

րիքհայեր Ֆադայի» կազմակերպությունների կողմից իրականացվող ահաբեկչությունը, որոնք պայքարում էին Իրանի փեիլևակա թագավորական վարչակարգի դեմ: Այս խմբավորման ահաբեկչական գործողությունների թիրախը թագավորական ընտանիքի և հիշյալ վարչակարգի ներկայացուցիչներն էին¹:

3. Բազմաձևակույթ հասարակություններում ազգային և կրոնական փոքրամասնությունների հանդեպ ցուցաբերված խտրականությունն ու վերջիններիս դժգոհությունները, ինչպիսին է, օրինակ Իրանում գործող արմատական կրոնական խմբավորումների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ահաբեկչությունը, որն իրականացվում է Իրանի՝ նմանատիպ փոքրամասնություններով բնակեցված Բալուչիստան և Զրդստան նահանգներում²:

4. Գաղափարական, ազգային և կրոնական դժգոհությունները, որոնց արդյունքում ձևավորվել է Պակիստանի «Սեփահե սահաբե» ահաբեկչական խմբավորումը, որը հարձակվում է այլ ազգերի և կրոնների նարկայացուցիչների և նրանց կենտրոնների, այդ թվում նաև շիաների և քրիստոնյաների վրա, որոնք գաղափարական և կրոնական տեսանկյունից տարբերվում են իրենցից³:

Բեն Լադենի և «Ալլահեդե» կազմակերպության և դրա ենթակայության տակ գործող խմբավորումների առաջնորդների անհատականությամբ:

¹Այս երկու ահաբեկչական կազմակերպությունները ձևավորվեցին և գործում էին շահական վարչակարգի դեմ պայքարի կոչերով և միտված էին պայքարելու փակ քաղաքական մթնոլորտի դեմ և նրանց հիմնական գաղափարախոսությունը անհատական և հասարակական ազատության հաստատումն էր: Այսպիսով նրանք սկսեցին ահաբեկչական գործողություններ իրականացնել շահական վարչակարգի և Ամերիկայից և Արևմուտքից կախվածության մեջ գտնվող պաշտոնյաների դեմ:

²Թուրքիայի քրդերից կազմված Փ.Զ.Զ կազմակերպությունը կամ Իրանի Զրդստանի Ջոմեյե կամ Դեմոկրատ կուսակցությունները, որոնք ահաբեկչական խմբավորումներ են, գործում են Իրանի Բալուչիստան նահանգում: Նրանք իրենց ահաբեկչական գործողություններն իրականացնում են ազգային խտրականության և ազգային ազատության դեմ պայքարի կոչերի ներքո: Այդ ամենի արդյունքում նրանց դասում են միջազգային ահաբեկիչների շարքերը:

³Պակիստանում գործող հատուկ կրոնական-ազգային ահաբեկչական խմբավորում, որն իր գաղափարական, կրոնական և սոցիալական տեսանկյուններից չի ընդունում այլ կրոնների և խմբավորումների համակեցությունն ու բոլոր ահաբեկչական մեթոդներով և գործողություններով պայքարում է դրանց դեմ:

յան մասին որոշ տեղեկությունները վկայում են, որ նա և նրա զաղափարակիրները իրենց արմատական և ծայրահեղական կրոնական համոզմունքների և նախկին ԽՍՀՄ-ի դեմ ԱՖղանստանում վարած պատերազմական անցյալի հիման վրա ունեցել են զաղափարական և միջազգային ահաբեկչական կազմակերպության վերածվելու կայուն հիմքեր: Նրանց առանձնահատկություններից մի քանիսը հետևյալն են.

1. Ինչպես գիտենք՝ Բեն Լադենը Սաուդյան մի հարուստ ընտանիքի զավակ էր (Մի խումբ հեղինակներ, հիմնական անվանումներ, 2012 թ, www.history.com): Ուստի, սարսափելի միջազգային ահաբեկչի վերածվելու համար Բեն Լադենը ոչ մի տնտեսական և ֆինանսական նպատակ չուներ: Ավելին, գոյություն ունեցող փաստերի հավաստմամբ՝ նա իր ընտանեկան կապիտալից և հարստությունից մեծ գումարներ էր ծախսում՝ ահաբեկչական նպատակների և զաղափարների իրականացման համար՝ դրանց մի մասը հատկացնելով իր ենթակայության տակ գործող խմբավորումներին:

2. Ինչպես գիտենք, Բեն Լադենի երիտասարդության և միջնակարգ կրթության տարիներն անցել են խիստ ավանդապաշտ, ծայրահեղական-արմատական սկզբունքներով և ուսմունքներով տոգորված նրա ընտանիքում, որտեղ մշտապես կարևորվում էր կրոնական արմատականությունը (Մի խումբ հեղինակներ, հիմնական անվանումներ, 2012թ, www.history.com): Այս պատմական փաստը զարգացնում է Բեն Լադենի անհատական և հասարակական կյանքում ահաբեկչական ձգտումների զաղափարական լինելու հանգամանքը:

3. Ինչպես գիտենք, Բեն Լադենը ԱՖղանստան ներխուժած և այնտեղ լայն գործունեություն ծավալած ԽՍՀՄ բանակի դեմ պայքարելու նպատակով որպես ամենաառաջին մահմեդական կամավորական ջոկատի անդամ, որը հետագայում հայտնի դարձավ «Աֆղան արաբներ» անվամբ, միացավ պայքարող աֆղաններին և մոջահիդներին, և, ինչպես հայտի, է նա և այդ խմբավորումները գտնվում էին Արևմուտքի և հատկապես Ամերիկայի և տարածաշրջանում նրանց արաբ դաշնակիցների տնտեսական, ռազմական և քաղաքական հովանավորչության ներքո: Ուստի, բնականաբար, Բեն Լադենի համար որևէ տարբերություն չուներ թե որ թշնամու դեմ է կռվում և ունենալով պարտիզանական և մարտական անցյալ, ուներ միջազգային կարգի ահաբեկչ դառնալու բոլոր հնարավորություններն ու հոգեվիճակը:

4. Բեն Լադենի կյանքի պատմության ուսումնասիրությունից տեսնում ենք, որ Արաբիայում, որտեղ ապրել և մեծացել է Բեն Լադենը, Ամերիկան և Արևմուտքը երբեք չեն դիտարկվել որպես թշնամիներ, սակայն, սովորական մարդկանց շրջանակներում գոյություն է ունեցել նրանց հանդեպ անվստահություն և վատատեսություն: Բեն Լադենը ծնվել և դաստիարակվել էր նման մշակույթի տեր երկրում և ընտանիքում: (Մի խումբ հեղինակներ, հոդված, Բեն Լադենի և ՍԻԱ-ի մեջև կապի հաստատում, Վիկիպեդիա, 2012թ, <http://en.wikipedia.org>): Ուստի, Բեն Լադենն ապրել է հատուկ հասարակական և քաղաքական պայմաններում և կարող էր քաղաքակիրթ աշխարհի և հատկապես Արևմուտքի և Ամերիկայի հանդեպ բացասական դիրքորոշում ունենալ և դառնալ այդ երկրների ամենառիսեթիմ թշնամին:

Վերոհիշյալ իրողությունների և գործոնների տրամաբանական համադրությամբ, որոնք վերաբերվում են ահաբեկչության ծագմանն ու տարածմանը, հասկանալի և բացատրելի է դառնում Բեն Լադենի համաշխարհային պատմության մեջ ամենամեծ, ամենավտանգավոր և դաժան ահաբեկչի վերածվելու բնական ընթացքը: Ավելի ճիշտ, գաղափարական ահաբեկչի ձևավորման բոլոր նախադրյալները Բեն Լադենի մեջ գոյություն են ունեցել, սակայն, թե ինչո՞ւ Բեն Լադենը անձնվեր զինվորից և գաղափարականից վերածվեց քաղաքակիրթ աշխարհի և հատկապես Արևմուտքի և Ամերիկայի ամենառիսեթիմ թշնամուն՝ վերածվելով սարսափելի դաժան և անկանխատեսելի ահաբեկչի, այն հարցն է, որը վերաբերվում է համապատասխան խնդիրներով զբաղվող միջազգային իրավական, քաղաքական և հասարակական կառույցներին: Այս հոդվածում հնարավոր չէ անդրադառնալ դրանց, սակայն, ստորև ընդհանրական կերպով կանդրադառնանք միջազգային իրավական կառույցների կողմից այս ոլորտում արված բացթողումներին:

Իրավական տեսանկյունից, այն էլ միջազգային ոլորտում, սպասվում էր, որ միջազգային ահաբեկչության խնդիրներով զբաղվող կազմակերպություններն ու կառույցները պետք է կատարեն ահաբեկչության դեմ պայքարի և ահաբեկչական գործողությունների կանխարգելման բավականին ազդեցիկ և հստակ քայլեր: Սակայն, հարցական է, թե այդ քայլերն ու գործողություններն արդյոք կատարվե՞լ են, թե՞ ոչ: Արդյո՞ք այդ գործողությունները ճշգրիտ և գոհացուցիչ են: Ընդհանուր առմամբ Արևմուտքը և հատկապես Եվրոպան, մինչև 1970-ականները ահաբեկչության հանդեպ ցուցաբերում էր պաշտպանողական դիրքո-

րոշում, սակայն, 1980-ականներից սկսած Արևմուտքը, ավելի ճշգրիտ եվրոպան և Ամերիկան, ահաբեկչության դեմ պայքարի իր պաշտպանողական դիրքորոշումը փոխարինեց հարձակվողականով: Այս նպատակով կնքվեցին բազմաթիվ միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաներ¹: (Արևմուտքի պատասխանը ահաբեկչությանը, Ալեքս Փի Շմիդտ և Ռոլանդ Դի Կերլինստեն, 1993 թ, «Ֆրանկ կաս» հրատ., էջ 253-262):

ա) Միջազգային ահաբեկչության դեմ պայքարին ուղղված առաջին միջազգային քայլերը, որոնք իրականացվեցին 1919 թվականին ահաբեկչության սահմանման և դրանից հետո առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ազգերի լիգայի շրջանակներում: Ազգերի լիգան կազմակերպված ահաբեկչությունը ներկայացրել է որպես պատերազմական հանցագործություն և սահմանել դրա 32 դրույթներից բաղկացած ցուցակը (Մի խումբ հեղինակներ, Ահաբեկչությունն ու միջազգային իրավունքը, «Նուր» հետազոտությունների կենտրոն, 2007, էջ 43): Ներկայացվածից դուրս մյուս գործողությունների առումով ահաբեկչության դեմ պայքարի առաջին կարևոր շարժումը սկսվել է 1972 թվականից՝ ՄԱԿ հանրային խորհրդի կողմից 30/34 կոնվենցիայի հրապարակմամբ²:

Այս կոնվենցիայի հիմնական գործընթացը, որը միջազգային ահաբեկչության դեմ պայքարի առաջին միջազգային գործընթացն էր, «ահաբեկչության դեմ պայքարի և դրա կանխարգելմանն ուղղված գոր-

¹1963, 1970, 1971 թվականներին ՄԱԿ կողմից հաստատված կոնվենցիաներ, որոնք վերաբերվում են օդային ահաբեկչությանը: 1973 թվականին կնքված դիվանագետների հանդեպ ահաբեկչության կոնվենցիան, 1979 թվականին գերիններին և պատանդներին վերաբերվող կոնվենցիան և բազմաթիվ նմանատիպ այլ կոնվենցիաներ:

²ՄԱԿ հանրային խորհուրդը 1972 թվականից մինչև այսօր հրապարակել է մոտ 74 կոնվենցիա, մինչև 2011 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձությունները հրապարակվել է թվով 24, իսկ դրանից հետո ընկած ժամանակահատվածում՝ ավելի քան 50 կոնվենցիա: Որոշ տարիների հրապարակված կոնվենցիաների քանակությունն անհամեմատ ավելի շատ է եղել: Օրինակ, 2011 թվականին դրանց թիվը եղել է 6, 2010 թվականին՝ 10, 2008 թվականին՝ 6, 2004 թվականին նույնպես 6: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ այդ կոնվենցիաներից ոչ մեկը պարտադիր բնույթ չի կրում և հիմնականում խորհրդատվական է, բնականաբար դրանցից ոչ մեկը չի կարողացել և չի կարող ահաբեկչության դեմ պայքարի գործընթացում ազդեցիկ նշանակություն ունենալ <http://www.un.org/terrorism/resolutions.shtml>:

ծողություններն» էին, որը 1991 թվականին 46/51 կոնվենցիայի հաստատման արդյունքում կորցրեց իր ազդեցության մեծ մասը:

Միջազգային ասպարեզում կարևոր ՄԱԿ հանրային խորհրդի հակահաբեկչական երկրորդ գործընթացը «Մարդու իրավունքների և ահաբեկչության» կոնվենցիան էր, որը հաստատվեց 1994 թվականին՝ 48/122 կոնվենցիա անվամբ: Եվ ի վերջո երրորդ կարևոր գործընթացը, որը վերաբերվում էր «Ահաբեկչության վերացմանն ուղղված գործողություններին», հաստատվեց 1995 թվականին՝ որպես 49/60 կոնվենցիա:

ՄԱԿ հանրային խորհրդի կողմից հետազայում հրապարակված բոլոր կոնվենցիաները հիշյալ երեք հիմնական գաղափարներին էին ուղևած, իհարկե 2001 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո հրապարակված կոնվենցիաներն առավելապես վերաբերվում էին երրորդ դրույթին: Առանց ՄԱԿ հանրային խորհրդի կոնվենցիաների հաշվի առնման, որոնք կրում են ահաբեկչության հանդեպ դատապարտիչ և կանխարգելիչ բնույթ, գոյություն ունեն նաև մի շարք այլ միջազգային կոնվենցիաներ, որոնք պարտադիր չեն և չեն կարող ապահովել բավականաչափ դրական ազդեցություն:

բ) ՄԱԿ անվտանգության խորհուրդը նույնպես, որպես միջազգային ահաբեկչության հետ առնչվող կառույց, որի հիմնական գործառույթներից մեկը հիշյալ երևույթի դեմ պայքարն է, միայն 1989 թվականին հրապարակեց 635 կոնվենցիան և գործնականում առաջին անգամ պաշտոնական և լուրջ դիրքորոշում ցուցաբերեց ահաբեկչության դեմ¹: Այս բնագավառում, առանց անվտանգության խորհրդի կոնվենցիաների և դրանց բովանդակության հաշվի առնման, դրանց պարտադիր անդամակցությունը մեծ դեր խաղաց միջազգային խաղաղության և անվտանգության հաստատման գործում: Դրանց պարտադիր անդամակցումը դարձավ միջազգային ահաբեկչության դեմ պայքարի և դրա կանխարգելմանն ուղղված գործողությունների իրականացման ազդե-

¹Այդ խորհուրդը մինչև օրս, այսինքն առաջին կոնվենցիայից հետո մոտ 23 տարվա ընթացքում, հրապարակել է մոտ 45 կոնվենցի, որոնք բոլորն էլ ուղղված են միջազգային ահաբեկչության դատապարտմանն ու դրա դեմ պայքարին: Անվտանգության խորհուրդը նույնպես մինչև 2001 թվականն ընկած ժամանակահատվածում հրապարակել է տարեկան ընդամենը 1, իսկ դրանից հետո՝ միջին հաշվով տարեկան 2 կոնվենցիա: Անցյալի համեմատ այդ քիվը եռապատկվել է, սակայն խորհրդի ուշացած գործողությունների արդյունքում, այսինքն հանրային խորհրդից մոտ 18 տարի հետո, ապացուցվեց, որ անվտանգության խորհուրդը նույնպես չի կարողացել արձանագրել ահաբեկչության դեմ պայքարի ազդեցիկ և հստակ գործողություններ:

ցիկ և կարևոր գրավական: Անվտանգության խորհրդի կոնվենցիաներից 1368 և 1373 կոնվենցիաները, որոնք հրապարակվեցին 2001 թվականի սեպտեմբերի 11-ին Ամերիկայի վրա կատարված հարձակումից անմիջապես հետո, համարվում են միջազգային ահաբեկչության դեմ պայքարի ամենախիստ և ազդեցիկ կոնվենցիաները, որոնք անուղղակի կերպով օպտիմալացրել են ահաբեկչության դեմ թույլատրելի պաշտպանության թույլտվությունն ու ՄԱԿ դեկլարացիայի 42 հոդվածը, որը վերաբերվում է անվտանգության խորհրդի պարտավորություններին և գործառույթներին: Այսուհանդերձ՝ անվտանգության խորհուրդը սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո հրապարակեց ահաբեկչության դեմ պայքարին ուղղված բազմաթիվ կոնվենցիաներ, սակայն, դրանից առաջ շատ քիչ ուշադրություն էր դարձնում այդ երևույթի հանդեպ և զուցե այդ անուշադրությունն ինքնին ինչ որ կերպ նպաստեց միջազգային ասպարեզում ահաբեկչության զարգացմանն ու տարածմանը:

գ) Չաշվի առնելով իջզգային ահաբեկչության զարգացումն ու տարածումը 1960 թվականներից հետո, երբ միջազգային ահաբեկչությունն ավելի լուրջ բնույթ ստացավ և սկսեց տարբերվել նախկին շրջանների ահաբեկչական գործողություններից (իհարկե այդ տարբերությունը նույնպես առաջացավ որոշակի նախադրյալների և պատճառների առկայության դեպքում և դրսևորվեց մեթոդների, տակտիկայի և կիրառվող միջոցների բազմազանությամբ), սպասվում էր, որ միջազգային քրեական օրենքներն ուսումնասիրող գիտահետազոտական և համալսարանական կառույցներն ավելի մեծ էներգիայով և ուժգնությամբ կիրականացնեն հիշյալ ոլորտում իրենց ուսումնասիրություններն ու հետազոտությունները և կառաջադրեն արդյունավետ եղանակներ: Իհարկե, ակադեմիական շրջանակներում հիշյալ բնագավառին վերաբերվող սաստիչ և կանխարգելիչ միջոցների և մեթոդների առաջադրմանն ուղղված ուսումնասիրությունները սկսվել են դեռևս տասնամյակներ առաջ, սակայն ահաբեկչությունը որպես առանձնակի լուրջ երևույթ մինչև սեպտեմբերի 11-ը լուրջ ուսումնասիրության չի ենթարկվել (Վալտեր, Լակուեր, Անվերջ պատերազմ, the continuum international publishing group inc հրատ., 2003 թ., էջ 131-138): Ուստի, ուսումնասիրողներն ու գիտնականները նույնպես ուշացումով են արձագանքել այդ կարևոր փաստին և միջազգային ահաբեկչության տարածման և զարգացման հարցում այդ գործոնն ունեցել է իր ազդեցությունը:

Իհարկե, այսօր «Ալլանդե»-ի առաջնորդն ու ներշնչանքի աղբյուրը կենդանի չէ, սակայն շարունակում է հանդիսանալ ահաբեկչական գործողությունների գաղափարական հիմք: Այդ ամենից բացի, Բեն Լադենի կողմից ամբողջ աշխարհում հիմնած շղթայական ցանցը այնպես է գործում, որ առաջնորդի բացակայությունը, անգամ զխավոր առաջնորդի, չի կարող խաթարել շղթայի գործունեությունը: Եվ միայն «Ալլանդե»-ի ընդհանուր ցուցումների միջոցով, ինչպես տեղի էր ունենում Բեն Լադենի կենդանության օրոք, առանց օրգանական և ամմիջական կապի, նրանք կարող են ծրագրել և իրականացնել իրենց ահաբեկչական գործողությունները¹ (Ալիեմադի Խալեդ, «Ալլանդեի» ներքին պատմությունները, մաս չորրորդ, «Էդդաս օլ արաբի» պարբերական, 22 մարտի, 2005 թ):

Ահաբեկչության դեմ պայքարի քաղաքագետները պետք է հաշվի առնեն այն իրականությունը, որ Բեն Լադենի մահը երբեք չի նշանակում նրա կողմից հիմնադրած համաշխարհային ահաբեկչական ցանցի ոչնչացումը: Ավելին, հնարավոր է, որ ահաբեկչական գործողություններն ավելի մեծ թափ ստանան և աշխարհի տարբեր ծայրերում տեղի ունենան բազմաթիվ և բազմաբնույթ ահաբեկչություններ: Այս ամենից ավելի վտանգավոր է «Ալլանդե»-ի և նրա համակիրների կողմից կազմվող կառավարությունը, ինչպիսին է օրինակ, թալիբների կառավարությունն Աֆղանստանում: Նման երևույթների մենք ականատես են լինում տարբեր իսլամական երկրներում, որոնց լավագույն օրինակները կարելի է տեսնել Լիբանանում և Եմենում: Գոյություն ունեցող վտանգը, հատկապես մեծ Եմենում (Մի խումբ հեղինակներ, «Ալլանդեն Եմենում և Սոմալիում», Ամերիկայի դեպարտամենտի հրատ., 2010), ուստի, թվում է, որ ահաբեկչության դեմ պայքարն իր առջև ունի բավականին դժվար և ճգնաժամային ժամանակաշրջան: Ուստի, հաջողության հասնելու համար ահաբեկչության դեմ պայքարի գործին լծված երկրները պետք է գործի դնեն իրենց բոլոր հնարավորություններն ու կարողությունները՝ դրանք ակտիվ գործի դնելով քաղաքական, ռազմական, տնտեսական և հատկապես մշակութային ասպարեզներում՝ ոգևորելով և ներգրավելով նաև մյուս երկրները:

¹«Ալլանդե»-ում կառավարման և առաջնորդման փիլիսոփայությունը պայմանավորված է գաղափարային կենտրոնացմամբ և ոչ թե՝ գործողությունների և քայլերի: